



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 25083/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

16 մարտի 2010թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

04/10/2010

*Սույն վճիռը վերջնական է դարձել Գոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Ժոզեփ Բասադեյալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Բոշտյան Մ. Զուպանչիչ [Boštjan M. Zupančič],

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էլսբերտ Մայեր [Egbert Myjer],

Ինետա Զիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis Lgpez Guerra],

Էն Փաուեր [Ann Power]՝ *դատավորներ,*

և Սանտյագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2010 թվականի փետրվարի 23-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վարդան Մամիկոնյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2005 թվականի հունիսի 21-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 25083/05) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ն. Բադդասարյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2007 թվականի դեկտեմբերի 11-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշել է գանգատի մասին ծանուցել Կառավարությանը: Որոշվել է նաև գանգատի ըստ էության քննությունն իրականացնել դրա ընդունելիության հարցի քննության հետ միաժամանակ (29-րդ հոդվածի 3-րդ կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1958 թվականին եւ ապրում է Երեւանում:

5. 2003 թվականի օգոստոսի 17-ին քրեական գործ է հարուցվել նախորդ օրը տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի փաստի առթիվ, որի հետևանքով մահացել էր մեկ մարդ: Տուժողը՝ Պ.-ն, իր ընկերոջ՝ Ժ.-ի հետ քայլում էր փողոցով, երբ մեքենան նրան վրաերթի ենթարկեց:

6. 2003 թվականի հոկտեմբերի 9-ին դիմումատուին, որը տվյալ մեքենայի վարորդն էր, մեղադրանք է առաջադրվել 242-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

7. Քննության ընթացքում ցուցմունքներ են տվել մի շարք վկաներ, այդ թվում՝ երեք ականատեսներ Ժ.-ն, Մ.-ն եւ Օ.-ն: Վկա Ժ.-ն նշել է, որ ինքը քայլելիս է եղել Պ.-ի հետ, երբ նկատել է 70-80 կմ/ժ արագությամբ փողոցով դեպի ներքեւ ընթացող մի ավտոմեքենա: Երբ մեքենան նրանցից մոտավորապես 13 մետր հեռավորության վրա է եղել, այն հանկարծ կտրուկ թեքվել է եւ ուղղվել է դեպի իրենց: Նրան հաջողվել է խույս տալ, սակայն Պ.-ն վրաերթի է ենթարկվել: Մինչեւ բախումն արգելակման ձայն չի լսվել: Նմանատիպ ցուցմունքներ են տվել նաև

վկաներ Մ.-ն եւ Օ.-ն, չնայած նրան, որ վերջինս նշել է, որ մեքենան ընթացել է 90-100 կմ/ժ արագությամբ: Պարզվում է, որ պետք է իրականացվեր դիմումատուի եւ վկա Օ.-ի առերեսում, սակայն վերջինս չի ներկայացել:

8. 2003 թվականի դեկտեմբերի 25-ին մեղադրական եզրակացությունը հաստատվել է եւ ուղարկվել Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարան:

9. 2004 թվականի հոկտեմբերի 18-ին Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքներում եւ դատապարտել է երկու տարի ժամկետով ազատազրկման: Այդ դատավճիռը հիմնված է եղել վկաներ Ժ.-ի եւ Մ.-ի ցուցմունքների, երեք այլ վկաների ցուցմունքների, դատաավտոտեխնիկական եւ դատաբժշկական փորձագետների ցուցմունքների վրա, որոնք բոլորն էլ հարցաքննվել են դատարանում, վկա Օ.-ի՝ քննության ընթացքում տված ցուցմունքի, դատաավտոտեխնիկական եւ դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների, ինչպես նաեւ դեպքի վայրի եւ դիմումատուի ավտոմեքենայի զննության արձանագրությունների վրա:

10. Չպարզված օրը դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել, որում ըստ երեւոյթին բարձրացրել է վկա Օ.-ի չներկայանալու հարցը:

11. 2004 թվականի դեկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը եւ Վարչական շրջանի դատարանի դատավճիռը թողել է անփոփոխ: Ինչ վերաբերում է վկա Օ.-ի՝ առերեսմանը չներկայանալուն, ապա Վերաքննիչ դատարանը գտել է, որ՝

«[վկա Օ.-ն] հայտնել է ..., որ իսկապես չի կարողացել գալ առերեսմանը, սակայն ցանկացել է նշել, որ [դիմումատուն] ոստիկանության ծառայող է, կապեր ունի եւ կարող է ինչ-որ ձևով վնասել իր ընտանիքին: 2003 թվականի դեկտեմբերի 16-ին, ժամը 12:20-ի սահմաններում, համայնքի դատախազության շենքի մոտ նա նկատել է [դիմումատուին] եւ մի խումբ տղամարդկանց: [Հ]ասկանալով նրանց՝ այդտեղ հավաքվելու պատճառը, նա մեքենայից չի իջել եւ [այդտեղից] հեռացել է: Նա պատրաստ է հաստատել իր ցուցմունքները

[դիմումատուի] հետ առերեսման ժամանակ, այդ թվում՝ դատարանում, եթե ապահովվի իր անվտանգությունը:

Գործում առկա տեղեկանքի համաձայն [(գ.թ. 176ա)]՝ [վկա Օ-ի] եւ [դիմումատուի] առերեսումն անհնարին է եղել:»:

12. 2004 թվականի դեկտեմբերի 31-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել այդ դատավճռի դեմ: Իր բողոքում նա նշել է, որ դատարանի դատավճիռն անօրինական է, քանի որ կայացվել է դատավարական նորմերի էական խախտմամբ: Դիմումատուն խնդրել է բեկանել Վարչական շրջանի դատարանի դատավճիռը եւ կայացնել նոր դատավճիռ: Նա նաեւ խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի դատավճիռը: Դիմումատուն ավելացրել է, որ բողոքի հիմնական փաստարկները կներկայացնի լրացուցիչ բողոքում՝ Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենը ստանալուց հետո:

13. 2005 թվականի հունվարի 4-ի գրությամբ՝ Վերաքննիչ դատարանի դատավճիռն ուղարկվել է դիմումատուին:

14. 2005 թվականի մարտի 2-ին համապատասխան փոստային ծառայության ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փոստային ծառայությունն այդ գրությունը ստացել է 2005 թվականի հունվարի 7-ին եւ դիմումատուին է հանձնել 2005 թվականի հունվարի 10-ին:

15. 2005 թվականի հունվարի 12-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ ի լրումն իր՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքի, որը բաղկացած էր ութ էջանոց իրավական փաստարկներից: Դիմումատուն սկզբում նշել է, որ ինքը դատավճռի պատճենը ստացել է 2005 թվականի հունվարի 7-ին: Նա այնուհետեւ բողոքել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ վկա Օ.-ի՝ քննության ժամանակ տված ցուցմունքներն օգտագործվել են որպես իր դատապարտման հիմք: Այնուամենայնիվ, վարույթի որեւէ փուլում նրան հնարավորություն չի տրվել հարցաքննելու այդ վկային:

16. 2005 թվականի փետրվարի 4-ին Վճռաբեկ դատարանը քննել է 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքը եւ մերժել այն՝ գտնելով, որ՝

«Իր բողոքում [դիմումատուի] կողմից առաջ քաշված պատճառաբանությունն այն մասին, որ դատավճիռն անօրինական է, քանի որ կայացվել է դատավարական օրենքի էական խախտմամբ, ուստի ... առաջին ատյանի դատարանի դատավճիռը պետք է բեկանվի եւ պետք է կայացվի նոր դատավճիռ, անհիմն է: ... Քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածով պարզաբանվում է դատավարական օրենքի էական խախտում հասկացությունը, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում շարադրվում են այն կոնկրետ հիմքերը, որոնց առկայության դեպքում դատավճիռը ցանկացած դեպքում ենթակա է բեկանման: Չնայած դրան, [դիմումատուն] իր վճռաբեկ բողոքում չի նշել, թե որ հիմքերով պետք է Վճռաբեկ դատարանը ... բեկանի Վերաքննիչ դատարանի դատավճիռը եւ գործն ուղարկի նոր քննության: Թեեւ Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի դատավճիռը վերանայում է [դիմումատուի] բողոքի հիման վրա՝ բողոքում ներկայացված հիմքերի սահմաններում ... »:

17. Վճռաբեկ դատարանն այնուհետեւ նշել է, որ՝

« ... ինչ վերաբերում է նոր վճռաբեկ բողոքին՝ ներկայացված ի լրումն [2004 թվականի դեկտեմբերի 31-ի] բողոքի, ապա այն ներկայացվել է Քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածով սահմանված՝ բողոքարկման ժամկետի խախտումով, հետեւաբար Վճռաբեկ դատարանն այդ բողոքը թողնում է առանց քննության:»:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

242-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ավտոմեքենա վարող անձի կողմից ճանապարհային երթուղիների կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Բ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք

18. Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները՝ տվյալ ժամանակահատվածում գործող խմբագրությամբ, ունեն հետեւյալ

բովանդակությունը.

Հոդված 174. Ժամկետը բաց թողնելու հետեւանքները եւ դրա վերականգնման կարգը

«1. Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

2. Բաց թողնված ժամկետի վերականգնման համար շահագրգիռ անձը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է վարույթն իրականացնող մարմնին: [...]

3. Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ շահագրգիռ անձի միջնորդությամբ: ... »

Հոդված 216. Առերեսում

«1. Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի եւ մեկ այլ անձի ցուցմունքներում:»

Հոդված 332. Չներկայացած վկայի, փորձագետի, մասնագետի բացակայությամբ գործի քննության հնարավորության մասին հարցի լուծումը

«1. Դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի, փորձագետի, մասնագետի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատական քննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտի գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը:»

Հոդված 342. Վկայի ցուցմունքների հրապարակումը

«1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը [...] թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջեւ, ինչպես նաեւ սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:»

Հոդված 402. Վերաքննիչ դատարանի դատավճռի կամ որոշման օրինական ուժի մեջ մտնելը, եւ դրանք կողմերին հանձնելը

«1. Վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դրանց հրապարակման պահից հետո՝ տասնօրյա ժամկետում:

2. Վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում հանձնվում է դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին եւ օրինական ներկայացուցիչներին, [...], եթե նրանք մասնակցել են գործի քննությանը վերաքննիչ դատարանում:»

Հոդված 407. Վճռաբեկ բողոքը

«3. Այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը [...] ժամկետանց է, վճռաբեկ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:»

Հոդված 412. Դատավճռի բողոքարկման ժամկետները

«1. Վերաքննիչ դատարանի՝ [...] դատավճռի կամ որոշման դեմ վճռաբեկության կարգով բողոք կարող է ներկայացվել դատավճռի կամ որոշման հրապարակման օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:

...

3. Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության:»

Հոդված 415. Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմանները

«1. Վճռաբեկ դատարանը վերանայում է [...] վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները եւ որոշումները՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում: ...»:

Գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթեւեկության կանոնները հաստատելու մասին» թիվ 924-Ն որոշում (ուժի մեջ՝ 2002 թվականի օգոստոսի 11-ից մինչեւ 2007 թվականի սեպտեմբերի 15-ը)

19. Որոշման 9.2 կետի համաձայն՝ քաղաքային եւ գյուղական բնակավայրերում տրանսպորտային միջոցների երթեւեկությունը թույլատրվում էր 60 կմ/ժ ոչ ավելի արագությամբ:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ԴԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

20. Դիմումատուն բողոքել է, որ 2005 թվականի հունվարի 12-ին իր ներկայացրած լրացուցիչ փաստաթղթերը չքննելու հետևանքով խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները, որոնք, այնքանով, որքանով վերաբերելի են, ունեն հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են ... իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը ... ունի ... տրիբունալի կողմից արդարացի ... լսումների իրավունք»:

Ա. Ընդունելիությունը

21. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

22. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի 2005 թվականի հունվարի 12-ի լրացուցիչ վճռաբեկ բողոքը չքննելը համապատասխանել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Մասնավորապես, Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 412-րդ հոդվածի համաձայն՝ դիմումատուն ունեցել է տասն օր՝ Վերաքննիչ դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճիռը Վճռաբեկ դատարանում բողոքարկելու համար: 2004 թվականի դեկտեմբերի 31-ին նա բողոք է ներկայացրել, որը Վճռաբեկ դատարանի կողմից քննության է առնվել եւ մերժվել է: Ինչ վերաբերում է 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացված բողոքին, ապա այն ներկայացվել է ժամկետանց եւ, հետևաբար, Վճռաբեկ դատարանի կողմից թողնվել է առանց քննության: Ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէր ի լրումն նախնական բողոքի նոր բողոք ներկայացնելու ընթացակարգ: Ներպետական օրենսդրությամբ նույնիսկ սահմանված չէր «լրացուցիչ բողոք» հասկացություն: Ճիշտ է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված էր լրացուցիչ բողոքի տեսքով նոր փաստարկներ ներկայացնելու հնարավորություն: Այնուամենայնիվ, դիմումատուն դա պետք է աներ սահմանված ժամկետում:

23. Ավելին, քանի որ Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենը դիմումատուին է հանձնվել բողոքարկման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, դիմումատուն հնարավորություն է ունեցել ՔԴՕ-ի 174-րդ

հոդվածի համաձայն դիմելու Վճռաբեկ դատարան՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով: Համաձայն հաստատված դատական պրակտիկայի՝ դատավճռի պատճենի հանձնման ուշացումը բավարար հիմք է՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու համար: Այնուամենայնիվ, դիմումատուն չի օգտվել այդ հնարավորությունից:

24. Դիմումատուն պնդել է, որ ինքը բողոքը ներկայացրել է սահմանված ժամկետում, այն է՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ին, եւ իրավունք ուներ լրացուցիչ բողոքում այդ բողոքի առնչությամբ նոր փաստարկներ ներկայացնելու: Այդպիսի փաստարկները կարող են ներկայացվել ցանկացած պահի, սակայն բավականաչափ վաղ, որպեսզի դատարանը դրանք ուսումնասիրելու հնարավորություն ունենա: Վերաքննիչ դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռի պատճենն իրեն հանձնվել է ոչ թե երեք օրվա ընթացքում, ինչպես պահանջվում էր ՔԴՕ-ի 412-րդ հոդվածի 1-ին մասով, այլ տասնչորս օր հետո, այն է՝ բողոքարկման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո: Հետեւաբար, վերոնշյալ դատավճռի պատճենը ստանալուց հետո նա ստիպված է եղել մեկ այլ փաստաթուղթ ներկայացնել, որը եղել է ոչ թե առանձին բողոք, այլ, ավելի շուտ, 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքի բաղկացուցիչ մաս կազմող լրացուցիչ փաստարկներ: Նա երբեւէ չի պնդել, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ, որպես այդպիսին, նախատեսվում է «ի լրումն» կամ «լրացուցիչ» բողոք ներկայացնելու իրավունք: 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացված փաստարկները 2004 թվականի դեկտեմբերի 31-ին օրենքով սահմանված ժամկետում ներկայացված բողոքի բաղկացուցիչ մասն էին, եւ Վճռաբեկ դատարանը չպետք է դրանց վերաբերվեր որպես առանձին բողոքի: Հետեւաբար, նա օգտվել է ի լրումն նախնական բողոքի լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու իր իրավունքից, սակայն դրանք Վճռաբեկ դատարանի կողմից քննության չեն առնվել՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ:

2. Դատարանի գնահատականը

25. Դատարանը վերահաստատում է, որ «դատարանի իրավունքը», որի մի

մասն է կազմում մատչելիության իրավունքը, բացարձակ չէ. այն կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների, մասնավորապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ դրա բնույթից ելնելով՝ պահանջվում է պետության կողմից իրականացվող կարգավորում, որին այս առնչությամբ վերապահված է հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Այնուամենայնիվ, այդ սահմանափակումները չպետք է սահմանափակեն կամ նվազեցնեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը. վերջապես, նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, եթե դրանք չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ գործադրվող միջոցի եւ հետապնդվող նպատակի միջեւ առկա չէ համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս *Levages Prestations Services v. France*], 1996 թվականի հոկտեմբերի 23, § 40, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1996-V, եւ *Brullat Go´mez de la Torre v. Spain*], 1997 թվականի դեկտեմբերի 19, § 33, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1997- VIII): Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է ունենա հստակ եւ գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է արվում իր իրավունքներին (տե՛ս *Bellet v. France*], 1995 թվականի դեկտեմբերի 4, § 36, շարք Ա թիվ 333-F):

26. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ ներպետական օրենսդրությունը նախելառաջ մեկնաբանվում է ազգային իշխանությունների եւ հատկապես դատարանների կողմից, եւ որ Դատարանը կամայականության բացակայության դեպքում դրանք չի փոխարինի իր իսկ մեկնաբանություններով: Մասնավորապես, դա վերաբերում է դատարանների կողմից այնպիսի դատավարական նորմերի մեկնաբանմանը, ինչպիսիք են փաստաթղթեր ներկայացնելու կամ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետները (տե՛ս, ի թիվս այլ աղբյուրների, *Stehlethor Go´mez de la Torre v. Spain*], 1995 թվականի դեկտեմբերի 4, § 36, շարք Ա թիվ 333-F):

Garcia v. Spain], 1997 թվականի դեկտեմբերի 16, § 31, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1997-VIII*):

27. Դիմումներ, բողոքներ կամ այլ գանգատներ ներկայացնելու ժամկետների վերաբերյալ կանոնները, անկասկած, նախատեսված են արդարադատության պատշաճ իրականացումը եւ, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանությունն ապահովելու համար: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կկիրառվեն: Այնուամենայնիվ, տվյալ կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտեն, որ դատավարության մասնակիցներն օգտվեն իրավական պաշտպանության հասանելի միջոցից (տե՛ս *Պերես դե Ռադա Կավանիլես ընդդեմ Իսպանիայի* [*Perez de Rada Cavanilles v. Spain*], 1998 թվականի հոկտեմբերի 28, § 45, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1998-VIII*):

28. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ Հայաստանի Հանրապետության՝ տվյալ ժամանակահատվածում գործող քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ դիմումատուն Վերաքննիչ դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար ունեցել է տասն օր ժամկետ: Դիմումատուն բավարարել է այդ պահանջը՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ին վճռաբեկ բողոք ներկայացնելով, սակայն չտրամադրելով մանրամասն փաստարկներ: Այդպիսի փաստարկները ներկայացվել են տասնօրյա ժամկետի ավարտից հետո, այն է՝ 2005 թվականի հունվարի 12-ին, եւ Վճռաբեկ դատարանի կողմից չեն ընդունվել քննության:

29. Դատարանը, նախեւառաջ, կարծում է, որ թեպետ տասնօրյա ժամկետը երկար չէր, այն ինքնին չի կարող համարվել այնքան կարճ, որ դիմումատուին զրկեր բողոքարկման ընթացակարգից օգտվելու իրական եւ արդյունավետ հնարավորությունից: Իհարկե, բողոքարկման համար սահմանված կարճ ժամկետները ստանդարտ առանձնահատկություն են Պայմանավորվող պետությունների բողոքարկման համակարգերի համար (տե՛ս *Բացին ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* (որոշում) [*Bacev*

v. *the Former Yugoslav Republic of Macedonia* (dec.)], թիվ 13299/02, 2006 թվականի փետրվարի 14):

30. Այնուհետև Դատարանը նկատում է, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար տասնօրյա ժամկետի հաշվարկը սկսվել է ոչ թե Վերաքննիչ դատարանի դատավճռի կրկնօրինակը հանձնելու օրվանից, այլ այդ դատավճռի հրապարակման օրվանից: Դատարանն այս կանոնը եւս ինքնին չի համարում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ պայմանով, որ այն ուղեկցվում է բավարար երաշխիքներով, որոնք բողոքարկող անձանց թույլ են տալիս օգտվել բողոքարկման աստիճանի արդյունավետ մատչելիությունից, այդ թվում՝ նրանց ընձեռնելով հիմնավորված բողոքներ ներկայացնելու հնարավորություն: Դատարանն այդ առնչությամբ նկատում է, որ ՔԴՕ-ի 402-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվում էր, որ Վերաքննիչ դատարանի դատավճիռը ոչ ուշ, քան հրապարակման օրվանից երեք օրվա ընթացքում հանձնվեր ամբաստանյալին: Ավելին, ՔԴՕ-ի 174-րդ հոդվածով նախատեսվում էր հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքով դիմելու հնարավորություն:

31. Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ ՔԴՕ-ի 402-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը դիմումատուի գործում չի պահպանվել: Ավելին, ոչ միայն Վերաքննիչ դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 27-ի դատավճռի պատճենը դիմումատուին չի հանձնվել պահանջվող երեք օրվա ընթացքում, այլև այն նրան է հանձնվել բողոքարկման համար սահմանված տասնօրյա ժամկետի ավարտից հետո միայն: Այսպիսով, դիմումատուն այդ տասն օրվա ընթացքում իր տրամադրության տակ չի ունեցել վերոնշյալ դատավճռի պատճենը, որպեսզի կարողանար դրա դեմ մինչև օրենքով սահմանված ժամկետի ավարտը հիմնավորված բողոք ներկայացնել: Այդպիսի հանգամանքներում դիմումատուին չի կարելի մեղադրել իր՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ին ներկայացված բողոքում մանրամասն փաստարկներ չներկայացնելու եւ դա միայն օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո անելու համար (տե՛ս, *mutatis mutandis* (*համապատասխան փոփոխություններով*), *Հաջիանաստասիուն ընդդեմ Հունաստանի* [*Hadjianastassiou v. Greece*], 1992 թվականի դեկտեմբերի 16, § 33, շարք

Ա թիվ 252):

32. Ինչ վերաբերում է ՔԴՕ-ի 174-րդ հոդվածով սահմանված՝ բաց թողնված ժամկետի վերականգնման խնդրանքի հնարավորությանը, ապա ճիշտ է, որ դիմումատուն այդպիսի խնդրանք չի ներկայացրել: Այնուամենայնիվ, Դատարանը նկատում է, որ, ինչպես արդեն վերը նշվել է, 2004 թվականի դեկտեմբերի 31-ին բողոք ներկայացնելով՝ դիմումատուն բավարարել է բողոքարկման տասնօրյա ժամկետի պահանջը: Այսպիսով, 2005 թվականի հունվարի 12-ին Վճռաբեկ դատարան ներկայացված փաստաթուղթը, որպես այդպիսին, եղել է ոչ թե բողոք, այլ ավելի շուտ լրացուցիչ փաստարկներ, որոնք ներկայացվել են ի լրումն 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքի: Կողմերը համաձայնել են, որ լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն, իհարկե, եղել է՝ չնայած Կառավարությունը պնդել է, որ նման փաստարկները եւս պետք է ներկայացվեին օրենքով սահմանված միեւնույն ժամկետում:

33. Դատարանն այս առնչությամբ այնուամենայնիվ նշում է, որ լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու ընթացակարգն օրենքով որեւէ կերպ կարգավորված չի եղել: Որեւէ հստակ կանոն կամ պահանջ սահմանված չի եղել այն մասով, թե ինչ ձևով պետք է ներկայացվեն այդպիսի փաստարկները կամ արդյոք որեւէ ժամկետներ են կիրառվել այդ փաստարկները ներկայացնելու համար: Մյուս կողմից, ՔԴՕ-ի 174-րդ հոդվածում հատուկ խոսվում է հարգելի պատճառով բաց թողնված «ժամկետը» վերականգնելու հնարավորության մասին: Այսինքն, դիմումատուին չի կարելի մեղադրել այդպիսի փաստարկներ ներկայացնելիս ՔԴՕ-ի 174-րդ հոդվածով նախատեսված խնդրանքը չներկայացնելու համար: Ամեն դեպքում, նույնիսկ ենթադրելով, որ բողոքարկման համար սահմանված ժամկետները կիրառելի են եղել նաեւ լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու նկատմամբ, Դատարանը կասկած է հայտնում, որ գործի հանգամանքներում դիմումատուից պահանջվում էր ներկայացնել ՔԴՕ-ի 174-րդ հոդվածով նախատեսված խնդրանք՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրա կողմից ժամկետանց փաստարկներ ներկայացնելու միակ պատճառը եղել է վիճարկվող դատավճռի պատճենը իշխանությունների կողմից պատշաճ ժամկետում իրեն

չհանձնելը:

34. Դատարանը միեւնոյն ժամանակ նշում է, որ դիմումատուն իր՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքում հստակորեն նշել է, որ նա մտադիր էր Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենն ստանալուց հետո ներկայացնել լրացուցիչ փաստարկներ: Ավելին, դիմումատուի կողմից 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացված փաստաթղթում, թեպետ այն վերնագրված էր «վճռաբեկ բողոք», հստակորեն նշվում էր, որ այն ներկայացված էր ի լրումն 2004 թվականի դեկտեմբերի 31-ի բողոքի: Ավելին, 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացրած լրացման մեջ դիմումատուն նշել է, որ ինքը դատավճռի պատճենն ստացել է 2005 թվականի հունվարի 7-ին միայն: Ճիշտ է, որ առկա է որոշակի անհամապատասխանություն դիմումատուի կողմից 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացված լրացման մեջ նշված օրվա եւ փոստային բաժանմունքի 2005 թվականի մարտի 2-ի տեղեկանքի մեջ նշված օրվա միջեւ (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանն այդ անհամապատասխանությունը որոշիչ չի համարում, քանի որ երկու օրերն էլ բողոքարկման համար օրենքով սահմանված տասնօրյա ժամկետից դուրս են: Վերջապես, Դատարանը նշում է, որ չնայած լրացուցիչ փաստարկներ ներկայացնելը կանոնակարգող հստակ իրավական նորմերի բացակայությանը, դիմումատուն գործել է բարեխղճորեն՝ այդպիսի փաստարկները ներկայացնելով առանց անհարկի ուշացման, այն է՝ Վերաքննիչ դատարանի դատավճռի պատճենն ստանալուց ընդամենը մի քանի օր հետո:

35. Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն անտեսել է վերը նշված բոլոր հանգամանքները եւ շատ հակիրճ պատճառաբանությամբ մերժել է քննել դիմումատուի կողմից 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ փաստարկները: Այդպիսով, Վճռաբեկ դատարանում գործի քննության շրջանակը սահմանափակված է եղել միայն 2004 թվականի դեկտեմբերի 31-ի իր բողոքում դիմումատուի կողմից նշված հիմքերով՝ ինչպես պահանջվում է ՔԴՕ-ի 415-րդ հոդվածի 1-ին մասով (տե՛ս, ի հակադրություն դրա, *Բացելի* գործը՝ վերելում հիշատակված): Այնուամենայնիվ, այդ բողոքը, ինչպես արդեն վերը նշվել է,

գործնականում որեւէ իրավական փաստարկ չէր պարունակում՝ դիմումատուից անկախ պատճառներով:

36. Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ Դատարանը կարծում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից դիմումատուի 2005 թվականի հունվարի 12-ի լրացուցիչ փաստարկները քննելը մերժելն անհամաչափորեն սահմանափակել է դիմումատուի՝ այդ դատարանի արդյունավետ մատչելիությունը:

37. Համապատասխանաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

38. Դիմումատուն բողոքել է, որ իրեն հնարավորություն չի տրվել հարցաքննելու վկա Օ.-ին, որի՝ նախաքննության ժամանակ տված ցուցմունքները գործի վարույթի ցանկացած փուլում օգտագործվել է որպես իր դատապարտման հիմք: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը, որով, այնքանով, որքանով վերաբերելի է, սահմանվում է.

«3. Քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության...»:

Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

39. Կառավարությունը նշել է, որ վկա Օ.-ն պատահարի միակ ականատեսը չի եղել, որը դիմումատուի մեղքը ենթադրող ցուցմունք է տվել: Ավելին, նրա

ցուցմունքն էապես չի հակասել այլ վկաների ցուցմունքներին, որոնց դիմումատուն հարցաքննել է դատական նիստերի ընթացքում: Վկա Օ.-ի ցուցմունքը չի եղել դատարանների կողմից ճշմարտությունը պարզելու համար օգտագործված միակ ապացույցը: Դատարաններն իրենց եզրահանգումները կատարել են երկու այլ ականատեսների ցուցմունքների, հանցագործության վայրում հայտնաբերված արյան հետքերի եւ ավտոմեքենայի լուսարձակների կտորների զննության արձանագրությունների հիման վրա, որոնք համապատասխանել են մյուս վկաների ցուցմունքներին, եւ նույնիսկ առանց այդ ցուցմունքի բավարար են եղել պատահարի մեխանիզմը վերլուծելու եւ իրավական գնահատական տալու համար: Այդպիսով, դիմումատուի մեղավորությունն ապացուցելիս վկա Օ.-ի ցուցմունքը որեւէ էական դեր չի խաղացել եւ, հետեւաբար, 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում տեղի չի ունեցել:

40. Դիմումատուն նշել է, որ յուրաքանչյուր ապացույց դատարանների կողմից օգտագործվել է կոնկրետ փաստը պարզելու համար: Այդպիսով, վկա Օ.-ի ցուցմունքը, համաձայն որի ինքը մեքենան վարել է թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող, այն է՝ 90-100 կմ/ժ արագությամբ, հիմք է հանդիսացել ավտոտեխնիկական փորձաքննության փորձագետի եւ, այնուհետեւ, դատարանների համար՝ եզրակացնելու, որ ինքը խախտել է երթեւեկության կանոնները: Եթե չլիներ վկա Օ.-ի ցուցմունքը, դատարանները կհանգեին այլ եզրակացության, մասնավորապես, որ նա չէր խախտել երթեւեկության կանոնները: Հետեւաբար, իր գործողություններում հանցագործության հատկանիշներ չէին լինի, եւ ինքը կարդարացվեր: Այդպիսով, վկա Օ.-ին հարցաքննելու հնարավորության բացակայությունը հանգեցրել է 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտման:

2. Դատարանի գնահատականը

41. Դատարանը վերահաստատում է, որ ապացույցների ընդունելիությունն առաջին հերթին կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ, եւ որ, որպես

կանոն, իրենց ներկայացված ապացույցների գնահատումը թողնված է ներպետական դատարաններին: Դատարանի խնդիրն է հաստատել, թե արդյոք վարույթն իր ամբողջությամբ, այդ թվում՝ այն եղանակը, որով ապացույցները ձեռք են բերվել, եղել է արդար (տե՛ս *Աշն ընդդեմ Ավստրիայի* [*Asch v. Austria*], 1991 թվականի ապրիլի 26, §26, շարք Ա թիվ 203, եւ *Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Edwards v. the United Kingdom*], 1992 թվականի դեկտեմբերի 16, § 34, շարք Ա թիվ 247-Բ):

42. Բոլոր ապացույցները, սովորաբար, պետք է հրապարակվեն մեղադրյալի ներկայությամբ, դոնբաց դատական նիստում՝ հաշվի առնելով մրցակցային դատավարության սկզբունքը: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ որպես ապացույց օգտագործվելու համար վկաների ցուցմունքները միշտ պետք է տրվեն դատարանում անցկացվող դոնբաց դատական նիստում. մինչդատական փուլում ձեռք բերված այդպիսի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին կետին եւ 3-րդ կետի «դ» ենթակետին՝ պայմանով, որ պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները: Որպես կանոն, այդ իրավունքներով պահանջվում է, որ մեղադրյալին տրվի համապատասխան եւ պատշաճ հնարավորություն՝ վիճարկելու իր դեմ ցուցմունք տված վկայի ցուցմունքները եւ հարցաքննելու նրան՝ ցուցմունք տալու պահին կամ վարույթի հետագա փուլերում (տե՛ս *Դելտան ընդդեմ Ֆրանսիայի* [*Delta v. France*], 1990 թվականի դեկտեմբերի 19, § 36, շարք Ա թիվ 191-Ա):

43. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման հետևանքով անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու համար դիմումատուի դատապարտումը, *inter alia*, հիմնվել է վկա Օ.-ի կողմից քննության ժամանակ տրված ցուցմունքի վրա: Դիմումատուի եւ այդ վկայի առերեսում չի կատարվել, որը նաեւ չի ներկայացել դատարան՝ պնդելով, որ վախենում է իր հանդեպ հաշվեհարդարից: Այդպիսով, վարույթի ոչ մի փուլում դիմումատուն այդ վկային հարցաքննելու հնարավորություն չի ունեցել:

44. Այդուհանդերձ, չի կարելի ասել, որ դիմումատուի դատապարտումը զգալիորեն հիմնված է եղել վկա Օ.-ի ցուցմունքի վրա (տե՛ս *Վերդամն ընդդեմ Նիդերլանդների* (որոշում) [*Verdam v. the Netherlands* (dec.)], թիվ 35253/97, 1999 թվականի օգոստոսի 31, եւ, ի հակադրություն դրա, *Վան Մեխելենը եւ այլք ընդդեմ Նիդերլանդների* [*Van Mechelen and Others v. the Netherlands*], 1997 թվականի ապրիլի 23, § 63, Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1997-III): Նրա դատապարտումը հիմնվել է նաեւ երկու այլ կարեւոր ականատեսների՝ Ժ.-ի եւ Մ.-ի ցուցմունքների, երեք այլ վկաների եւ երկու փորձագետների ցուցմունքների, ինչպես նաեւ փորձագիտական մի շարք եզրակացությունների եւ զննությունների վրա (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Այդպիսով, վկա Օ.-ի կողմից տրված ցուցմունքը հաստատվել է գործով առկա այլ՝ հավասարապես ծանրակշիռ ապացույցներով (տե՛ս *Արտներն ընդդեմ Ավստրիայի* [*Artner v. Austria*], 1992 թվականի օգոստոսի 28, § 22, շարք Ա թիվ 242-Ա, եւ *Դոորսոնն ընդդեմ Նիդերլանդների* [*Doorson v. the Netherlands*], 1996 թվականի մարտի 26, § 80, Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1996-II):

45. Ավելին, ի հակադրություն դիմումատուի պնդումների՝ վկա Օ.-ի ցուցմունքը միակ ապացույցը չի եղել, որը դատարաններին ստիպել է հանգել այն եզրակացության, որ դիմումատուն խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները: Փաստորեն, վկա Օ.-ի ցուցմունքն էական հակասության մեջ չի եղել երկու մյուս ականատեսների տված ցուցմունքների հետ, քանի որ նրանք երեքն էլ հաստատել են, որ դիմումատուն մեքենան վարելիս է եղել օրենքով թույլատրված առավելագույն 60 կմ/ժ արագությունը գերազանցող արագությամբ, իսկ նրանց ցուցմունքներում առկա աննշան անհամապատասխանությունը, այն է՝ 70-80կմ/ժ՝ ի հակադրություն 90-100 կմ/ժ արագության, որեւէ ազդեցություն չի ունեցել ներպետական դատարանների կողմից արված եզրահանգումների վրա (տե՛ս վերելում՝ 7-րդ եւ 9-րդ պարբերությունները):

46. Դատարանը եզրակացնում է, որ այն փաստը, որ դիմումատուն չի կարողացել հարցաքննել վկա Օ.-ին, գործի հանգամանքներում չի խախտել պաշտպանության կողմի իրավունքներն այնչափ, որ հանգեցնի 6-րդ հոդվածի 3-

րդ կետի «դ» ենթակետի խախտման:

47. Հետեւաբար, գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

III. ԹԻՎ 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

48. Դատարանը նշում է, որ դիմումատուն նույն փաստական հանգամանքների կապակցությամբ վկայակոչել է նաեւ Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածը՝ պնդելով, որ իր 2005 թվականի հունվարի 12-ին ներկայացրած լրացուցիչ բողոքը չքննելը հանգեցրել է նաեւ այդ դրույթի խախտման, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդված

«1. Քրեական իրավախախտում կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով:

2. Այդ իրավունքից կարող են բացառություններ արվել օրենքով սահմանված աննշան իրավախախտումների առնչությամբ, կամ երբ տվյալ անձը դատվել է ամենաբարձր ատյանի կողմից, որը հանդես է եկել որպես առաջին ատյանի դատարան, կամ դատապարտված է եղել այդ անձի արդարացման դեմ վճռաբեկ գանգատի քննարկումից հետո:»:

49. Այնուամենայնիվ, Դատարանը կարծում է, որ այս բողոքը բխում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործով առաջացող հիմնական խնդիրներից: Հաշվի առնելով 6-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ Դատարանի եզրահանգումները՝ Դատարանը չի կարծում, որ սույն գանգատի ընդունելիության եւ ըստ էության առանձին քննության անհրաժեշտություն կա:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

50. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

51. Դիմումատուն պահանջել է 30 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում, քանի որ ինքը դատապարտվել է երկու տարի ժամկետով ազատազրկման:

52. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի ներկայացրել որեւէ փաստարկ կամ ապացույց ի հաստատումն իր այն պնդման, որ նա կրել է ոչ նյութական վնաս: Նույնիսկ եթե ենթադրենք, որ դիմումատուն կրել է որոշակի տառապանք, ապա դա եղել է նրա օրինական ազատազրկման հետևանքով, քանի որ նրա դեմ ներկայացված մեղադրանքը հիմնված է եղել անհերքելի ապացույցների վրա:

53. Դատարանը կարծում է, որ դիմումատուն, անկասկած, կրել է ոչ նյութական վնաս Կոնվենցիայի՝ սույն վճռով ճանաչված խախտման հետևանքով: Դատարանը, որոշում կայացնելով արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուին շնորհում է 1 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

54. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* դիմումատուի 2005 թվականի հունվարի 12-ի լրացուցիչ փաստաթղթերը չքննելու առնչությամբ բողոքն ընդունելի, իսկ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի առնչությամբ բողոքը՝ անընդունելի.
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.
3. *Վճռում է*, որ Թիվ 7 արձանագրության 2-րդ հոդվածի մասով ներկայացված բողոքի ընդունելիության եւ ըստ էության առանձին քննության անհրաժեշտություն չկա.
4. *Վճռում է*, որ՝
 - ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է ոչ նյութական վնասի դիմաց դիմումատուին վճարի 1 000 (հազար) եվրո՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.
 - բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.
5. *Մեքժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2010 թվականի մարտի 16-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտյագո Կեսադա

Ժողելի Քասադեյալ

Քարտուղար

Նախագահ